ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռս, ցավոք սրտի, տեղեկացավ ի մասին անսպասելի ներկայության և գործունեության, Ս. Էջմիածնի իրավասության ենթակա Մարսելի թեմի մեջ, Կիլիկյան Աթոռի միաբան Տ. Արտավազդ եպիսկոպոսի, որի հետևանքով Մարսելի հայ եկեղեցական համայնքի ծոցում առաջացած է ներքին խռովություն և պառակտում: Ստացված են բողոքագրեր Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի առաջնորդ Տ. Սերովբե արքեպիսկոպոսից և Մարսելի հայոց թեմական և եկեղեցական վարչության կողմից:

Մայր Աթոռս այս պարագան համարում է եկեղեցական կանոնների բացահայտ խախտում և բոլորովին ոչ համաձայն Երուսաղեմի 26 հոկտեմբեր 1963 թվականի ողջագուրման ոգուն: Որով, խիստ բաղձալի է և անհրաժեշտ, որ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը անհապաղ պարտն ու պատշաճը տնօրինի, ի պահպանումն Հայ Եկեղեցու կարգաց և կանոնաց, նվիրապետական մեր Աթոռների իրավասությանց սահմանների և սփյուռքահայ եկեղեցական կյանքի միասնության ու խաղաղության:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

9 մարտի 1964 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ